ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-545-18.06.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի 9.2-րդ հոդվածի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

2936	Պրովիտամիններ, վիտամիններ	Վիտամին
3002 20 000	Պատվաստանյութ՝ մարդու համար	Պատվաստանյութ
3002 30 000	Պատվաստանյութ՝ կենդանիների համար	Պատվաստանյութ
3003	Դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար, մանրածախ առևտրի համար չփաթեթավորված	Դեղ
3004	Դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար՝ փաթեթավորված մանրածախ առևտրի համար	Դեղ
3303 00	Օծանելիք	Օծանելիք

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

1. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված վիտամինների, պատվաստանյութերի, դեղերի և օծանելիքի իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2014 թվականի նոյեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված վիտամինների, պատվաստանյութերի, դեղերի և օծանելիքի իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան, ՀՀ ԱԺ պատգամավոր Գ. Նուշիկյան	Առաջարկվում է պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների խմբում ներառել նաև օծանելիքը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: